ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

« » 2025 թ. N

Ձեր 07.05.2025

Մ/20986-2025

ՄԵԴԻԱ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ

ԼՐԱԳՐՈՂ Գ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

ԷԼ. ՀԱՍՑԵ՝ GOHARSARGSYAN.JO@GMAIL.COM

Հարգելի՛ տիկին Սարգսյան,

Ի պատասխան Ձեր 07.05.2025 թ. թիվ Մ/20986-2025 գրության **առաջին հարցի՝** տեղեկացնում ենք, որ Պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանում առկա տեղեկատվության համաձայն՝ 10.12.2023թ-ից մինչև 26.05.2025թ. ժամանակահատվածում կենսաթոշակ նշանակելու համար դիմել է Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված թվով 29367 անձ: Նրանցից 620 անձի կենսաթոշակի նշանակումը մերժվել է կենսաթոշակի իրավունք տվող՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պայմանները չբավարարելու հիմքով: Արդյունքում 28747 անձի նշանակվել է կենսաթոշակ, որից 26255-ը Լեռնային Ղարաբաղում արդեն իսկ կենսաթոշակի իրավունք ձեռք բերած անձինք են (նրանց ԼՂ օրենսդրությամբ նշանակված է եղել կենսաթոշակ), իսկ 2492 անձ առաջին անգամ կենսաթոշակի իրավունք ձեռք է բերել Հայաստանի Հանրապետությունում:

Երկրորդ հարցի առնչությամբ հայտնում եմ, որ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց կենսաթոշակի իրավունքը «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով և օրենքի կիրարկումն ապահովելու մասին ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ սահմանված կարգի համաձայն իրացնելիս, խոչընդոտ

են հանդիսանում կենսաթոշակ նշանակելու համար պահանջվող՝ աշխատանքային և օրենսդրությամբ նախատեսված աշխատանքային ստաժում հաշվառվող այլ գործունեության ժամանակահատվածները հաստատող փաստաթղթերը (նաև՝ արխիվային) քաղաքացիների կողմից չներկայացնելը, «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ում պահանջվող արխիվային փաստաթղթերի, ինչպես նաև, Լեռնային Ղարաբաղի կենսաթոշակային բազայում Լեռնային Ղարաբաղի անհատական (անձնավորված) հաշվառման տվյալների բազաներում համապատասխան (պահանջվող) տեղեկատվության բացակայությունը (բացառությամբ Ստեփանակերտի և Մարտունու շրջանի):

Երրորդ հարցի առնչությամբ հայտնում եմ, որ ՀՀ կենսաթոշակային օրենսդրությամբ կենսաթոշակ նշանակելու, աշխատանքային ստաժը հաստատելու կանոններն ընդհանուր են ինչպես ՀՀ քաղաքացիների, այնպես էլ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց համար:

Աշխատանքային ստաժը հաշվառելու հետ կապված խնդիրները քննարկելիս հարկ է նկատի ունենալ, որ կան անձինք, որ, անկախ քաղաքացիությունից կամ բռնի տեղահանված լինելուց, աշխատել են ՀՀ և ԼՂ տարածքներում ու հիմա ստաժի հաստատման խնդիր ունեն երկու դեպքում էլ: Այս փաստը մեկ անգամ ևս հիմք է խնդրի համակարգային լուծման համար:

Օրենսդրության համաձայն՝ 1992-2012թթ (ԼՂ տարածքում՝ 1992-2013թթ) ձեռք բերած աշխատանքային ստաժը հաստատվում է աշխատանքային գրքույկով և սոցիալական վճար կատարելը կամ աշխատավարձ ստանալը հավաստող փաստաթղթով:

Մասնավորապես՝ Միասնական սոցիալական ծառայությանն է փոխանցվել Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի և Մարտունու շրջանի անհատական (անձնավորված) հաշվառման տվյալների բազան, իսկ որոշ արխիվային փաստաթղթեր փոխանցվել են նաև Հայաստանի ազգային արխիվ:

Կենսաթոշակային ոլորտում վարվող քաղաքականությունը միտված է սահմանել և ընդլայնել այն դեպքերի շրջանակը, երբ չի պահանջվում սոցիալական վճար կատարելը կամ աշխատավարձ ստանալը հավաստող փաստաթուղթ:

Սա լուծում է թե՛ Լեռնային Ղարաբաղի և թե՛ ՀՀ տարածքում ձեռք բերված այն ստաժերի համար, որոնք հաստատելը մի կողմից օբյեկտիվորեն անհնար է, մյուս

կողմից՝ համապատասխան կազմակերպություններն այդ տարիներին հիմնականում գործունեություն են իրականացրել:

Օրենսդրությամբ սոցիալական վճարներ կատարելը կամ աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթուղթ չի պահանջվում (այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի տարածքում աշխատած ժամանակահատվածի համար), եթե անձն աշխատել է՝

- մինչև 1996 թվականի նոյեմբերի 10-ը, իսկ Լեռնային Ղարաբաղի տարածքում՝ մինչև 1998 թվականի հունվարի 19-ը՝ քաղաքային, շրջանային, ավանային, գյուղական խորհուրդների գործադիր կոմիտեներում, դրանց ենթակա դպրոցներում, գրադարաններում, բնակշահագործման (բնակարանային շահագործման) գրասենյակներում (տեղամասերում, տնտեսություններում),

- դպրոցներում, մանկապարտեզներում, թանգարաններում, արխիվներում և այլն:

Մինչև 2014 թվականի հունվարի 1-ը Լեռնային Ղարաբաղում աշխատած ժամանակահատվածն աշխատանքային ստաժում հաշվառվում է նաև աշխատանքային ստաժը սահմանող՝ Լեռնային Ղարաբաղի հանձնաժողովի 2021 թվականի հուլիսի 30-ից հետո տրված տեղեկանքով:

Այսպիսով, 1992-2012**թթ (ԼՂ տարածքում՝** 1992-2013**թթ) ձեռք բերած աշխատանքային ստաժը հաշվառելու խնդիրը լուծվել է համակարգային՝ թե՛ ՀՀ և թե՛ ԼՂ տարածքում աշխատանքային գործունեության համար:**

Վերոնշյալ դեպքերի շրջանակը, երբ չի պահանջվում սոցիալական վճար կատարելը կամ աշխատավարձ ստանալը հավաստող փաստաթուղթ, շարունակվում է ընդլայնվել:

Այս նպատակով մշակվել և ներկայումս շրջանառվում է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» կառավարության որոշման նախագիծը (ներկայացվել է շահագրգիռ մարմինների կարծիքին):

Հիշյալ Նախագիծն ընդունվելու դեպքում կհաստակեցվեն ստաժի հաշվարկման կանոնները, կլուծվեն նաև իրավակիրառ պրակտիկայում ծագած բազմաթիվ խնդիրներ:

Միաժամանակ հայտնում եմ, որ հիշյալ նախագիծը օրենսդրությամբ սահմանված կարգով առաջիկայում կներկայացվի նաև հանրային քննարկման.

կտեղադրվի Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում (https://www.e-draft.am/):

Չորրորդ հարցի վերաբերյալ տեղեկացնում եմ, որ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության կողմից օգտագործման իրավունքով ՄՄԾ հանձնվել է ԼՂ ՊԵԿ արխիվացված շտեմարանը՝ 2014-2023թթ. վերաբերվող տեղեկատվությամբ, որն ամբողջությամբ հասանելի է, ինչպես նաև, հասանելի են Ստեփանակերտի և Մարտունու շրջանի անհատական (անձնավորված) հաշվառման տվյալների բազայի արխիվացված շտեմարանները:

Հինգերորդ հարցին ի պատասխան՝ տեղեկացնում եմ, որ կենսաթոշակ նշանակելու համար պահանջվող աշխատանքային ստաժը հաստատող փաստաթղթերը և ստաժը հաշվառելու կարգը սահմանված է «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածով, մասնավորապես, այդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ աշխատանքային ստաժը հաստատող փաստաթղթերի բացակայության դեպքում աշխատանքային ստաժը հաստատվում է դատական կարգով:

Օրենսդրությամբ սահմանված է նաև, որ կենսաթոշակառուի, ում կենսաթոշակի գործն առկա է Լեռնային Ղարաբաղի կենսաթոշակային բազայում (անկախ կենսաթոշակ ստանալու իրավունքը Լեռնային Ղարաբաղում դադարեցված լինելու հանգամանքից) աշխատանքային ստաժում մինչև 2023 թվականի հոկտեմբերի 1-ն ընկած աշխատանքային և այլ գործունեության, զինվորական ծառայության ժամանակահատվածները հաշվարկվում են Լեռնային Ղարաբաղի կենսաթոշակային բազայում առկա ստաժով (առանց վերանայելու):

Միաժամանակ, «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք չունեցող անձինք ունեն ծերության նպաստի իրավունք՝ 65 տարին լրանալու դեպքում:

Վեցերորդ հարցի առնչությամբ հայտնում ենք, որ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի համաձայն՝ կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման՝ կենսաթոշակին վերաբերող որոշումները կարող են բողոքարկվել վերադասության կամ դատական կարգով: Կենսաթոշակ նշանակելը մերժելու հիմքով ԼՂ-ից տեղահանված անձանց կողմից դատարաններ դիմած անձանց թվաքանակի վերաբերյալ առանձին հաշվառում չի իրականացվում, իսկ

աշխատանքային կարգով կատարված հաշվառման արդյունքում՝ վերջին 10 ամիսների ընթացքում Հայաստանի Հանրապետության դատարաններ են դիմել ԼՂ-ից տեղահանված թվով շուրջ 73 անձինք, որոնց գործերի մեծ մասը դեռևս գտնվում է ընթացիկ փուլում՝ դատարանների վարույթում:

Չորրորդ հարցի մասով նշենք, որ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը հանրային իրազեկման տարբեր գործիքների միջոցով պարբերաբար տեղեկատվություն է տրամադրել ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց՝ իրենց կենսաթոշակային իրավունքներին, ընթացակարգերին և այլ մանրամասների մասին: Մասնավորապես՝

Թիվ	**Թեմա**	**Լրատվամիջոց/հղում**	**Պաշտոնատար անձ**	**Ամսաթիվ**
1.	ՀՀ-ում ո՞ր կենսաթոշակներից և ինչպե՞ս կարող են օգտվել ԼՂ-ից բռնի տեղահանված անձինք:	ԱՍՀՆ պաշտոնական կայք https://mlsa.am/news/592		30.01.2024
2.	Այսօրվանից ընդունվում են ԼՂ հայրենակիցների կենսաթոշակների նշանակման դիմումները	ԱՍՀՆ պաշտոնական կայք https://mlsa.am/news/550		11.12.2023
3.	Հարցուպատասխան՝ ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց կենսաթոշակների ու նպաստների մասին	ԱՍՀՆ պաշտոնական կայք https://mlsa.am/news/534		23.11.2023
4.	Մանրամասներ՝ ԼՂ–ից բռնի	ԱՍՀՆ պաշտոնական կայք https://mlsa.am/news/519		06.11.2023

	տեղահանված անձանց կենսաթոշակների և նպաստների վերաբերյալ			
5.	ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց կենսաթոշակային իրավունքներ, նպաստներ	Հոդված 3	Տաթևիկ Միքայելյան – ԱՍՀՆ կենսաթոշակային ապահովության և այլ դրամական վճարների բաժնի պետ	23.03.2024
6.	ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց կենսաթոշակային իրավունքներ	Հանրային հեռուստաընկերություն	Անահիտ Գալստյան-ԱՍՀՆ կենսաթոշակային ապահովության և այլ դրամական վճարների վարչության պետ	16.04.2024
7.	ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց կենսաթոշակային իրավունքներ, աշխատանքային ստաժի հաշվարկում	Առավոտ	Անահիտ Գալստյան-ԱՍՀՆ կենսաթոշակային ապահովության և այլ դրամական վճարների վարչության պետ	10.07.2024

8.	ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց կենսաթոշակային իրավունքներ, աշխատանքային ստաժի հաշվարկում	Սիվիլնեթ	Անահիտ Գալստյան-ԱՍՀՆ կենսաթոշակային ապահովության և այլ դրամական վճարների վարչության պետ	12.07.2024
9.	ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց կենսաթոշակային իրավունքներ, աշխատանքային ստաժի հաշվարկում	Փաստինֆո	Անահիտ Գալստյան-ԱՍՀՆ կենսաթոշակային ապահովության և այլ դրամական վճարների վարչության պետ	12.07.2024

Ութերորդ հարցին անդրադարձ է կատարվել Գրությամբ արծարծված՝ 3-րդ հարցի շրջանակում. տրամադրվել է տեղեկատվություն ՀՀ կենսաթոշակային օրենսդրությամբ սահմանված՝ աշխատանքային ստաժը հաստատելու կանոնների, դրանց ընդհանուր բնույթ ունենալու և այն դեպքերի վերաբերյալ, երբ չի պահանջվում սոցիալական վճար կատարելը կամ աշխատավարձ ստանալը հավաստող փաստաթուղթ:

Գրությամբ արծարծված 1-ին հարցի պատասխանում նշվել է ԼՂ բռնի տեղահանված անձանց նշանակված կենսաթոշակների վիճակագրությանը: Հարկ է նկատի ունենալ, որ 26255 անձի կենսաթոշակ է նշանակվել պարզեցված ընթացակարգով՝ Լեռնային Ղարաբաղի կենսաթոշակային բազայի տվյալներով, այդ թվում՝ առցանց ներկայացված դիմումների հիման: Հայաստանի Հանրապետությունում առաջին անգամ կենսաթոշակի իրավունք ձեռք բերած 2492 անձանց կենսաթոշակ նշանակելիս, առկայության դեպքում հաշվի է առնվել Լեռնային Ղարաբաղի տարածքում՝ մինչև 1998 թվականի հունվարի 19-ը՝

քաղաքային, շրջանային, ավանային, գյուղական խորհուրդների գործադիր կոմիտեներում, դրանց ենթակա դպրոցներում, գրադարաններում, բնակշահագործման (բնակարանային շահագործման) գրասենյակներում (տեղամասերում, տնտեսություններում), դպրոցներում, մանկապարտեզներում, թանգարաններում, արխիվներում աշխատելու հանգամանքը (ստաժը հաստատվել է առանց սոցիալական վճար կատարելը կամ աշխատավարձ ստանալը հավաստող փաստաթղթի): Ստաժը հաստատվել է նաև մինչև 2014 թվականի հունվարի 1-ը Լեռնային Ղարաբաղում աշխատած ժամանակահատվածի վերաբերյալ Լեռնային Ղարաբաղի հանձնաժողովի 2021 թվականի հուլիսի 30-ից հետո տրված տեղեկանքով:

Տեղեկացնում եմ, որ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց կենսաթոշակի նշանակման (Լեռնային Ղարաբաղում նշանակված և ՀՀ-ում ՀՀ օրենսդրությամբ վճարումը շարունակելու) գործընթացն իրականացվել է առավել պարզեցված ընթացակարգերով՝ առցանց եղանակով (https://socservice.am/) դիմում ներկայացնելու միջոցով: Ընդ որում, մինչև 2024 թվականի սեպտեմբերի 30-ը (այս ժամկետը 3 անգամ երկարաձգվել է) ներառյալ ներկայացված դիմումի հիման վրա Լեռնային Ղարաբաղի կենսաթոշակառուին կենսաթոշակը (պարգևավճարը, նպաստը) նշանակվել և վճարվել է 2023 թվականի հոկտեմբերի 1-ից: Այդ ժամկետից հետո դիմելու դեպքում կենսաթոշակը նշանակվում է դիմելու օրվանից:

Իններորդ հարցի մասով տեղեկացվում է, որ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց կենսաթոշակի, պարգևավճարի, նպաստի իրավունքն իրացնելու ընթացակարգերը պարզեցնելու նպատակով արդեն իսկ ընդունվել են մի շարք իրավական ակտեր (իրավական ակտերում կատարվել են մի շարք փոփոխություններ (լրացումներ)):

Տեղեկացնում եմ նաև, որ հաշվի առնելով իրավակիրառ պրակտիկայում առաջացած խնդիրները (Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը հասցեագրված բազմաթիվ դիմումները, հեռախոսազանգերով ներկայացված հարցերը)՝ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց կենսաթոշակային ապահովման գործընթացի պարզեցման համատեքստում՝ մշակվել և ներկայումս շրջանառվում է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» կառավարության որոշման նախագիծը: Այս հարցին անդրադարձ է կատարվել գրության 3-րդ հարցի վերաբերյալ տրված պատասխանում:

X

ՄԱՄՈՒԼԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Հ. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ**

Կատարող՝ Ինեսա Գևորգյան

Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի փորձագետ 010 52 14 31